



[Handwritten signature]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«ԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ՌԵՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Է.Վ.ԱՍՐԻՅԱՆ

«02» սեպտեմբերի 2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության

և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի

01.09.2026թ. թիվ 1 նիստի

Օրակարգ՝

Էդիտա Ռոբերտի Ալթունյանի «Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում» թեկնածուականատենախոսության քննարկում:

Նիստին մասնակցում էին՝ ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Ա.Աբաջյանը, Բ.Գ.Թ., դոցենտներ Վ.Պետրոսյանը, Ս.Գրիգորյանը, Ն.Դիլբարյանը, Ս.Ավետյանը, Ն. Մարկոսյանը, Բ.Գ.Թ., ասիստ. Ա.Կարապետյանը և այլք:

Հսեցին. իբրև առաջատար կազմակերպություն՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի քննարկմանը ներկայացված հիշյալատենախոսության վերաբերյալ Բ.Գ.Թ., դոցենտներ Ն.Դիլբարյանի, Ս.Գրիգորյանի, Ն.Մարկոսյանի և Բ.Գ.Թ., ասիստ. Ա.Կարապետյանի գրավոր կարծիքները:

Նշվեց, որ աշխատանքի արդիականությունը լիարժեք հիմնավորված էատենախոսության մեջ. հեղինակն իրավացիորեն նշում է, որ տարածության և

Ժամանակի լեզվական ընկալումն ու կադապարավորումը ժամանակակից լեզվաբանության առանցքային խնդիրներից են: Ղարաբաղի բարբառի¹ նյութի հիման վրա նման համակարգված հետազոտության իրականացումը խիստ արդիական է: Արցախի հայաթափման և բարբառակիրների սփռման պատմական ողբերգական պայմաններում, երբ բարբառը կտրվել է իր բնական միջավայրից և կանգնած է աստիճանական դուրսմղման վտանգի առջև, դրա բառապաշարային հարստության և իմաստային համակարգի գրանցումն ու գիտական քննությունը ստանում են նաև հույժ ռազմավարական ու ազգապահպան նշանակություն:

Նշվեց, որ ատենախոսությունը բարբառագիտական մեծ արժեք ներկայացնող ծավալուն հետազոտություն է: Այն պատշաճորեն վերլուծում է Ղարաբաղի բարբառի տարածաժամանակային հարաբերությունները՝ դրանք դիտարկելով ոչ միայն լեզվական կադապարների, այլև ազգագրական ու ժողովրդական լեզվամտածողության համատեքստում:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ ամբողջական, համակարգված քննության են ենթարկվում Ղարաբաղի բարբառում տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները՝ դրանց ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական ու գործառական առանձնահատկությունների վերհանմամբ: Հեղինակը հաջողությամբ առաջադրել է տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող իմաստային-թեմատիկ խմբերի բառապաշարի նորովի դասակարգում:

Ղարաբաղի բարբառի բազմազան լեզվական ձևերի արձանագրումը կարող է օգտակար լինել հետագա բառարանագրական, բարբառագիտական և հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունների համար:

Ներածությունում հստակ ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տեսական ու գործնական նշանակությունը, մեթոդաբանական հիմքերը: Հատկանշական է պատմական ու բարբառագիտական աղբյուրների (Ստ. Սյունեցի, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան և այլք) հարուստ ակնարկը:

¹ Ի դեպ, գրախոսները նշեցին, որ քանի որ ատենախոսության թեման հաստատված էր Ղարաբաղի բարբառ անվամբ, ուստի կարծիքներում հնչում է Ղարաբաղի բարբառ արտահայտությունը, սակայն կարևորվեց այն, որ ցանկալի կլիներ՝ աշխատանքի վերնագրում կիրառված լիներ Արցախի բարբառ արտահայտությունը:

Աշխատանքի դրական կողմերը

1. **Առաջին գլուխը** նվիրված է Ղարաբաղի բարբառում տարածության ընկալման, տարածական կողմնորոշման, սահմանների, ուղղությունների և տեղանիշ բառապաշարի քննությանը: Հեղինակի նպատակն է ցույց տալ, թե ինչպես են բարբառակիրները լեզվական տարբեր միջոցներով (բնիկ և փոխառյալ բառեր, բարդություններ, ածանցավոր ձևեր, դարձվածքներ) կադապարում իրենց շրջապատող ֆիզիկական տարածությունը: Հեղինակը մանրակրկիտ քննության է ենթարկում «տեղ» (տըղ/տը^{1/2}ղ/տեղ) բառի իմաստային դաշտն ու դրա շուրջ ձևավորված հնդեվրոպական արմատական շերտերը (օրինակ՝ սըղ/սէտ ձևերը): Ուշագրավ է նաև տարածական սահմաններ, ուղղություն, շարժում և կողմնորոշում արտահայտող բառերի (ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ թարափ, դօլ, յան, պուճախ և այլն) քննությունը: Ցույց է տրվում, թե ինչպես է բարբառում «տեղ» բառը նյութական/ֆիզիկական տարածություն ցույց տալուց անցում կատարում դեպի վերացական, հոգեվիճակային կամ իրավիճակային իմաստների: Վերլուծվում են **տեղ** արմատով կազմված բարդություններն ու ածանցավոր ձևերը, ինչպես նաև դրա մասնակցությամբ դարձվածքները: Քննության են ենթարկվում տարածական տարբեր հարաբերություններ (մոտիկություն, հեռավորություն, վերև, ներքև, կողմ) արտահայտող բառերը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տարածական իմաստ ունեցող փոխառյալ բառամիավորներին, ինչպիսիք են **թանրանփ** (կողմ, ուղղություն), **դօլ** (թև, կողմ), **յան** (կողմ), **պուճախ** (անկյուն), **բուրջ** (աշտարակ, բարձր տեղ) և այլն: Վերլուծվում են այն բառերն ու կապական ձևերը, որոնք մատնանշում են շարժման ուղղվածությունը կամ տարածության մեջ օբյեկտի գտնվելու վայրը (վեր, տակ, ճոթ, կէս և այլն):

2. **Երկրորդ գլուխը** նվիրված է Ղարաբաղի բարբառում ժամանակի ընկալման, չափման միավորների, ժամանակային հարաբերություններ արտահայտող բառապաշարի ու քերականական/կապական ձևերի համակարգված քննությանը: Հեղինակի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է բարբառակիրն արձանագրում ու կադապարում ժամանակի ընթացքը՝ օգտագործելով ինչպես բնիկ ու փոխառյալ բառամիավորներ, այնպես էլ ազգային-կենցաղային ու ծիսական իրողությունների վրա հիմնված ժամանակ ցույց տվող համակարգը: Քննության են ենթարկվում օրվա տարբեր հատվածներ (առավոտ, ցերեկ, երեկո, գիշեր, լուսաբաց, մայրամուտ) արտահայտող բարբառային բառերը (**մորմօյմն**, **ըրկէ** և այլն), տարվա եղանակներ, ամիսներ և օրեր, վերլուծվում են եղանակների, շաբաթվա օրերի և ամիսների

բարբառային անվանումները, դրանց ծագումնաբանությունը (բնիկ հայերեն ձևեր և օտար փոխառություններ, օրինակ՝ **սահաթ, վախտ**): Յույց է տրվում, թե ինչպես են բարբառակիրները որոշակի ժամանակահատվածներ կամ իրադարձություններ կապում ազգային-տոնական օրացույցի հետ (օրինակ՝ Տյառնընդառաջ Ջատիկ, Խաղողօրհնեք, Խաչվերաց և այլն): Քննվում են գյուղատնտեսական ու կենցաղային աշխատանքների հետ կապված ժամանակային նշումները (հունձ, կալ, վարուցան, անասունների արոտ հանելու պահեր):

3. Երրորդ գլխի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է Ղարաբաղի բարբառակիրն իր տեսած ֆիզիկական տարածության բառերն ու հասկացությունները օգտագործում անտեսանելի ժամանակը նկարագրելու համար (տարածական բառերի վերածումը ժամանակայինի): Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես են ի սկզբանե տեղ, դիրք կամ ուղղություն ցույց տվող բառերը դառնում ժամանակի ցուցիչներ, այսինքն՝ Ղարաբաղի բնակիչն ինչպես է իր շրջակա միջավայրի (լեռներ, ձորեր, տեղանք) ընկալումով կադապարել ժամանակի ընթացքը և ֆիզիկական աշխարհի պատկերները տեղափոխել ժամանակային տիրույթ:

Դիտարկումներ և դիտողություններ

Աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի հետ մեկտեղ կցանկանայինք անդրադառնալ մի քանի խնդրահարույց կետերի, որոնց շտկումը կբարձրացնի ուսումնասիրության գիտական արժեքը:

1. Ստուգաբանական վերլուծության մեթոդաբանություն: Թեև ատենախոսը, ընդհանուր առմամբ, ծանոթ է համեմատական լեզվաբանության և լեզուների համեմատական ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքներին, սակայն դրանց կիրառությունը ոչ միշտ է հետևողականորեն արված աշխատանքում: Տարածական և ժամանակային իմաստ ունեցող որոշ բառերի (թանձի, դանձ, գյունե, դուզե, դոլ, յան, պուճախ, բուրջ սահաթ, վախտ, մահանա, զաման և այլն) քննության ժամանակ հստակ սահմանազատված չեն դրանց ծագման աղբյուրները (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն): Էջ 44-ում բերվում են տարածական օբյեկտներն անվանող գոյականներ՝ առանց ծագումնաբանական, իմաստների բացահայտման և բառակազմական կադապարների լեզվական քննության:

2. Աշխատանքի համակարգվածություն: Աշխատանքում ներկայացված է հարուստ և արժեքավոր փաստական նյութ, սակայն առանձին հատվածներում

նկարագրական և դասակարգողական մոտեցումը գերակշռում է տեսական ընդհանրացման նկատմամբ: Երբեմն աշխատանքը ստանում է հավաքական բնույթ. այն հստակ ցույց է տալիս, թե Ղարաբաղի բարբառում ինչ ձևեր կան, սակայն ավելի քիչ է բացահայտում, թե ինչ ընդհանուր օրինաչափություն է բխում տվյալ նյութից: Թեկնածուական ատենախոսության համար ցանկալի է, որ հարուստ փաստական նյութից բխի նաև ընդհանրացնող և հստակ ձևակերպված համակարգային օրինաչափություն: Առաջանում է մեկ կարևոր հարց. **ի՞նչ նոր բան է տվել հենց այս հետազոտությունը, ո՞րն է այս դասակարգման մեջ հեղինակային ներդրումը:** Ուստի, օրինակ՝ յուրաքանչյուր խոշոր բաժնի ավարտին կարելի էր առանձնացնել. «**Քննության արդյունքում պարզվեց, որ...**» և 3-5 կետով ներկայացնել տվյալ բաժնի հեղինակային արդյունքները:

3. Օրինակների բացակայություն: Ատենախոսն իր տեսական պնդումներն ամրակայում է բանահյուսական աղբյուրներից քաղված օրինակներով, բայց որոշ դեպքերում օրինակները բացակայում են: Այս պարագայում տեսական պնդումների արժանահավատությունը կասկածելի է դառնում: Ձորօրինակ՝ էջ 49-ում նշվում է, որ ժէմ ձևը զուգորդվում է ժում տարբերակով, բայց բերված օրինակներից ոչ մեկում ժում տարբերակը չկա: Չկան օրինակներ նաև 73-րդ էջում վկայակոչված հույժ հետաքրքրական շարաթվա օրերի առանձին նշանակումներին վերաբերող մակբայների համար՝ *ալոր, կալոր, չալոր, ճալոր, մալոր, փալոր*: Կամ էջ 107-ում *վախտ* ժամանականիշ բառի կոնկրետացման գործառույթը նշվում է, բայց այն հաստատող նախադասության մեջ *վախտ* բառը չկա:

4. Վիճակագրական-քանակական վերլուծության բացակայություն: Ատենախոսության մեջ տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող բառապաշարն ու դարձվածաբանական միավորները քննվում են որակական ու նկարագրական մեթոդներով: Հեղինակը չի ներկայացրել հստակ վիճակագրական տվյալներ կամ տոկոսային հարաբերակցություն այն մասին, թե քննված ողջ բառաշերտի ո՞ր մասն են կազմում բնիկ հայերեն միավորները, ո՞ր մասը՝ փոխառությունները (արաբական, պարսկական, թուրքական և այլն), մինչդեռ նման քանակական-վիճակագրական տվյալների առկայությունը աշխատանքին կտար առավել ճշգրիտ, հավաստի պատկեր: Հուսով ենք, որ հետագայում, երբ

ատենախոսությունը որպես մենագրություն հրապարակելու պահը կլինի, կկազմվի տեղանիշ և ժամանականիշ բարբառային միավորների քանակական պատկերը աղյուսակների և տրամագրերի տեսքով, ինչն առավել չափելի կդարձնի Էդիտա Ալթունյանի կատարած կարևոր և գնահատանքի արժանի մեծ աշխատանքը:

5. Այլ դիտարկումներ: Առկա են որոշ վրիպակներ (էջ 7, 11, 17, 35, 84), ոճական (էջ 4, 17), տողատակի հղման սխալներ (էջ 4, 17, 47), անհարկի կրկնություններ՝ անգամ նույն պարբերության մեջ, օրինակ՝ էջ 42-ում նշվում է, որ **«ընդ էջ չուրաթանը մեկնում/պլիթում ա»** ասում են նրանց մասին, ովքեր առիթը բաց չեն թողնում նպաստավոր պայմաններից, հանգամանքներից օգտվելու», ապա 4-րդ տողի ներքևում նորից բերվում է **«չուրաթանը պլիթում ա»** արտահայտությունը և նորից բացատրում, թե **«այդպես ասում են նրանց մասին, ովքեր գործում են սեփական շահի համար՝ անկախ պայմաններից»:**

Ամփոփմանը նշվեց, որ Էդիտա Ալթունյանի ատենախոսությունը, չնայած նշված թերություններին, որոնք բնական են նման ծավալի և բարդության աշխատանքի համար, հայ բարբառագիտության մեջ կարևոր ձեռքբերում է: Այն ոչ միայն լրացնում է առկա բացը, այլև իր առաջ քաշած վարկածներով ու վերլուծություններով դառնում է արժեքավոր ելակետ հետագա հետազոտությունների համար: Աշխատանքի սեղմագրի դրույթները ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:


Այսպիսով՝ գրախոսների ընդհանուր եզրակացությունն այն է, որ Էդիտա Ռոբերտի Ալթունյանի «Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում» թեկնածուական ատենախոսությունը գրված է պատշաճ մակարդակով և բավարարում է ներկայացվող պահանջները:


Որոշեցին. Էդիտա Ռոբերտի Ալթունյանի «Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում» թեկնածուական ատենախոսությունը կարևոր աշխատանք է: Այն բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի

պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման
կանոնակարգին և Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտության թվանիշին:

Քվեարկություն կողմ (10), դեմ (0), ձեռնպահ (0):

Նիստի նախագահի ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆ.  Ա. Հ. Աբաջյան

Նիստի քարտուղար  Վ. Գալստյան

01.09.2026թ.

Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆ. Ա. Հ. Աբաջյանի ստորագրությունը:

ԵՊՀ գիտական քարտուղար  Մ. Հովհաննիսյան

